

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

1.1.1. 2002թ. հունվար-հուլիսի ՀՆԱ ցուցանիշը

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալը, ընթացիկ գներով, 2002թ. հունվար-հուլիսին կազմել է 562471.8 մլն. դրամ և դրա աճի տեմպը 2001թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 109.7%` 2001թ. հունվար- հուլիսի 106.0%-ի դիմաց:

ՀՆԱ-ի աճը հանրապետությունում պայմանավորված է հիմնականում բազային ճյուղերի աճով: Ընդհանուր առմամբ, 5 բազային ճյուղերի հաշվին ապահովվել է ավելացված արժեքի արտադրության 110.7% աճ, որը 6.5 տոկոսային կետով ավել է ձևավորվել, քան 2001թ. նույն ժամանակահատվածում: Ընդ որում, ՀՆԱ-ի կառուցվածքում 5 բազային ճյուղերի տեսակարար կշիռը 2001թ. հունվար-հուլիսի համեմատությամբ ավելացել է 1.2 տոկոսային կետով:

ՀՆԱ արտադրությունը տնտեսության հիմնական բազային ճյուղերով

(%-ով)

	Աճի տեմպը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատ- վածի նկատմամբ		ՀՆԱ հավելածի կազմը		ՀՆԱ կառուցվածքը ընդամենի նկատմամբ	
	հունվար-հուլիս		հունվար-հուլիս		հունվար-հուլիս	
	2001	2002	2001	2002	2001	2002
<i>ՀՆԱ հիմնական գներով</i>	104.1	109.7	3.7	8.5	88.1	88.2
որից`						
արդյունաբերություն	100.9	111.9	0.3	3.0	24.7	25.3
գյուղատնտեսություն	101.0	99.2	0.2	- 0.2	20.8	19.3
շինարարություն	105.6	134.1	0.5	3.0	8.7	10.8
տրանսպորտ և կապ	113.5	105.3	0.7	0.3	5.4	5.1
առևտուր և հանրային սնունդ	115.1	114.5	1.3	1.3	9.3	9.6
Ընդամենը, բազային ճյուղերը	104.2	110.7	3.0	7.4	68.9	70.1
Ապրանքների և ներմուծման զուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	121.8	109.7	2.3	1.2	11.9	11.8
ՀՆԱ, շուկայական գներով	106.0	109.7	6.0	9.7	100.0	100.0

Արտադրված ՀՆԱ-ի կառուցվածքը

(%-ով ընդամենի նկատմամբ)

	2001թ. հունվար-հուլիս	2002թ. հունվար-հուլիս
ՀՆԱ (ընթացիկ գներով)	100	100
այդ թվում`		
ապրանքներ	54.4	55.5
ծառայություններ	33.7	32.7
ապրանքների և ներմուծման զուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	11.9	11.8